ԱԼԵՎԻՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

Վարդան Հարությունյան[*]

Թուրքիայի պատմության ողջ ընթացքում ալևիները հալածված են եղել իսլամի սուննի ճյուղի հետևորդ իշխանավորների կողմից: Այդ հալածանքները հաճախ հանգեցրել են արյունալի բախումների՝ մշտապես լարված պահելով ալևիների և սուննիների հարաբերությունները: Խուսափելու համար միջկրոնական խնդիրներից՝ թե՛ Օսմանյան կայսրությունում և թե՛ հանրապետական Թուրքիայում ալևիները հաճախ ստիպված թաքցրել են իրենց ինքնությունը:

Այս իրավիճակը շարունակվեց նաև 20-րդ դարի երկրորդ կեսին, երբ քաղաքական որոշ ուժեր պարբերաբար հրահրում էին անկարգություններ՝ խորացնելով պետության և ալևիների միջև գոյություն ունեցող անջրպետը: Իրավիճակը սկսեց սրվել հատկապես 1970-ական թվականներին, երբ երկրի տարբեր շրջաններում տեղի ունեցան մի շարք բախումներ՝ արդյունքում թողնելով բազմաթիվ զոհեր և վիրավորներ: Այդ բռնությունները, որոնց ընթացքում ալևիները պարբերաբար հարձակումների էին ենթարկվում աջակողմյան սուննի արմատականների կողմից, հիմնականում հովանավորվում էին պետական որոշ մարմինների կողմից, որոնք գրեթե ոչինչ չէին անում այդ իրադարձությունները կանխելու և մեղավորներին պատժելու ուղղությամբ: Իսկ լրատվամիջոցները կատարված դեպքերը լուսաբանում էին ոչ թե որպես սուննիների և ալևիների բախումների, այլ ձախերի և աջերի պայքարի արդյունք:

Թուրքիան, ինչպես Մերձավոր Արևելքի գրեթե բոլոր երկրները, ունի թե՛ էթնիկ և թե՛ կրոնական խայտաբղետ բնակչություն, որը պահպանել է կրոնական և էթնիկ առանձնահատկությունները հատկապես ոչ մեծ քաղաքներում և գյուղական վայրերում: Թուրքիայի բնակչությունը մոտ 71 մլն է, որի 80%-ը թուրքեր են, մոտ 19%-ը՝ քրդեր: Երկրում բնակվում են նաև արաբներ, հայեր, հույներ, լազեր, վրացիներ, բուլղարներ, հրեաներ[1]: Կրոնական մեծամասնություն են կազմում իսլամի սուննի ճյուղի հետևորդները: Նրանցից հետո թվաքանակով երկրորդ մեծ կրոնական համայնքը Թուրքիայում ալևիներն են, որոնք, ըստ *«Minority Rights Group International»* միջազգային կազմակերպության 2004թ. հրապարակած զեկույցի, կազմում են բնակչության մոտ 15-20%-ը՝

[*] ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ասպիրանտ:
[1] https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/tu.html

մոտ 12-15 միլիոն մարդ, իսկ Ամերիկայի պետդեպարտամենտի 2006թ. հրապարակած տվյալների համաձայն՝ ալևիների թիվը Թուրքիայում հասնում է մինչև 20 միլիոնի: Ալևական համայնքը մեծամասնորեն կազմված է թուրքերից, իսկ մոտ մեկ հինգերորդը կազմում են քրդերը[1]:

Հանրապետական Թուրքիայի պատմության ընթացքում ալևիների նկատմամբ հալածանքները սկսվել էին դեռևս 1920-30-ական թվականներին՝ Թուրքիայի արևելյան շրջաններում քրդական ապստամբությունների ճնշման ժամանակ: Հատկապես 1937-38թթ. Դերսիմի իրադարձությունների ընթացքում տեղի ունեցած դաժան դեպքերը, երբ տարբեր տվյալներով կոտորվեցին 40-70 հազար ալևիներ, ցնցեցին այս համայնքի ներկայացուցիչներին և ստիպեցին կրկին անցնել նախկին ներհամայնքային կենսակերպին՝ մերժելով այն ամենը, ինչը կապված է պետության հետ՝ պետությունը դիտելով որպես գործիք սուննիների ձեռքում՝ իրենց ճնշելու համար [1, c. 198]:

Հետագայում երկրում փոխված քաղաքական իրավիճակը, ինչպես նաև 1960-ական թվականներին լայն թափով սկսված ուրբանիզացիան ալևիներին ստիպեցին դառնալ ավելի բաց համայնք և, սեփական շահերի պաշտպանության նպատակով, հանդես գալ քաղաքական ձախ հոսանքների կամ ալևական խմբավորումների շարքերում:

Առաջին լուրջ բախումներն ալևիների և սուննիների միջև տեղի ունեցան 1978թ. ապրիլին Մալաթիայում, երբ սադրիչ գործողությունների միջոցով հրահրվեցին բազմաթիվ վայրագություններ, ինչի արդյունքում զոհվեց մոտ մեկ տասնյակ և վիրավորվեց ավելի քան հարյուր մարդ[2] [2]:

Մյուս բնակավայրը, որտեղ հրահրվեցին բախումներ ալևիների և սուննիների միջև, Սվազն էր: Այստեղ տեղի ունեցած իրադարձությունների ընթացքում անգամ ալևիների դեմ ջիհադ հայտարարելու կոչեր եղան, իսկ սուննի ամբոխին զայրացնելու նպատակով մզկիթներում աղոթքի ժամանակ ստահոդ պատմություններ էին պատմում[3]:

Այս երկու քաղաքներում տեղի ունեցած իրադարձություններն իրենց ծայրակետին հասան Քահրամանմարաշում՝ նույն թվականի դեկտեմբերին, երբ սուննի ամբոխի զոհը դարձան ավելի քան 120 ալևիներ [2, էջ 31-32], վիրավորվեց 1000-ից ավելի մարդ [3, p. 404]: Այս իրադարձությունները կազմակերպված էին Ազգայնական շարժում կուսակցության ղեկավար Ալփարսլան Թյուրքեշի կողմից վերահսկվող զինված գրոհային ջոկատների միջոցով, որոնց անվանում էին «Գորշ գայլերի» հասարակական-քաղաքական շարժում [4, էջ 109]:

Տեղի ունեցածի կապակցությամբ «անվերջ ձգձգվող» քրեական գործեր հարուցվեցին, իսկ բախումներին մասնակցած անձանց դատավարությունը

[1] Minorities in Turkey, Minority Rights, Group International, July 2004, http://www.minorityrights.org/; Country Reports on Human Rights Practices 2005, http://www.state.gov/g/drl/rls/hrrpt/2005/61680.htm
[2] Radikal, 17 Kasım 2008.
[3] Sivas olayları 1978, http://www.pirsultan.net/kategori.asp?KID=6&ID=57

շարունակվեց մինչև 1991թ., սակայն մեղադրյալների մեծ մասը, որոշ ժամանակ անց ներում ստանալով, ազատ արձակվեց բանտից: Դեպքերից հետո բազմաթիվ ալևիներ կանգնեցին քաղաքը լքելու փաստի առաջ՝ չցանկանալով բնակվել այս իրադարձությունների արդյունքում ստեղծված ծայրահեղ լարված մթնոլորտում [5, s. 167]:

1970-ական թվականներին ալևիների նկատմամբ խորացած ճնշումները շարունակվեցին նաև 1980թ. հեղափոխությունից հետո: Այդ նպատակով կիրառվեցին բոլոր հարմար միջոցներն ու տարբերակները: Օրինակ՝ ալևիների Հաջիբեքթաշում տեղի ունեցող արարողություններն արգելվեցին մի քանի տարի: Պետության կողմից սկսվեց քարոզվել այն գաղափարախոսությունը, թե ալևիներն իրականում սուննիներ են, որոնք ունեն այլ սովորույթներ:

1980թ. հեղաշրջումից հետո երկրում աջակողմյան և ձախակողմյան ուժերի միջև տեղի ունեցող փողոցային բախումների համար քաղաքական հանդարտության երաշխավոր դարձան բանակը և կառավարությունը, որի կազմում մեծ թիվ էին կազմում զինվորականները: Այն փորձեց հաշտարար արարողությունների կազմակերպման և համայնքային ընդհարումների ճնշման միջոցով թուլացնել լարումը սուննիների և ալևիների միջև: Կառավարությունը նաև որոշում կայացրեց երկրում ուժեղացնել կրոնի դերը՝ գերադասելով վերահսկվող հոգևոր կրթությունը երկրին վնասող հոգևոր պրոպագանդայից: Այս որոշումը սկսեց իրականացվել հատկապես երկրի արևելյան, հիմնականում՝ ալևիներով և քրդերով բնակեցված շրջաններում, որտեղ, սակայն, կատարվող ենթակառուցվածքային բարելավումները զուգակցվեցին մզկիթների կառուցմամբ և սուննի կրոնական դասընթացներին ալևի երեխաների պարտադիր մասնակցությամբ [6]:

Միջկրոնական լարված մթնոլորտը թուլացնելու նպատակով մի շարք գրքեր և հոդվածներ լույս տեսան, որոնք կոչված էին պայքարելու հասարակության մեջ կարծրացած կարծիքների դեմ, ըստ որոնց՝ ալևիականությունը պարունակում է անբարոյականության տարրեր, ինչի նպատակներից գլխավորը նախորդ տասնամյակների ընթացքում տեղի ունեցած ալևիական ճնշումների ազդեցությունը չեզոքացնելն էր: Թուրգութ Օզալի իշխանության գալուց հետո, երբ կրթության միջոցով փորձ արվեց ստեղծել սուննի-թուրքական իսլամական սինթեզ, ալևիներն էլ ավելի հստակ զգացին իրենց ինքնությունը պահելու անհրաժեշտությունը:

Իրենց դեմ պետության կողմից տարվող քարոզարշավը ալևիների շրջանում սկսեց ձևավորել այն համոզմունքը, թե իրենք քաղաքական խումբ են՝ կրոնական առանձին գաղափարախոսությամբ: Սկսվեց ալևիների մշակութային պայքարը, որի կորիզը դարձան Թուրքիայում մեծ տեմպերի հասած ուրբանիզացիայի հետևանքով գյուղական փակ համայնքներից դուրս եկած բազմաթիվ ալևիներ, որոնք կրթություն էին ստացել երկրի տարբեր բարձրա-

գույն ուսումնական հաստատություններում: Նրանք կազմեցին ֆոնդեր և միություններ, վերակառուցեցին սրբերի դամբարանները և վերականգնեցին ալևիական ծիսակատարությունները, որպեսզի հզորացնեն ալևիական մշակույթը, համայնքը, ինքնությունը: Պատմության մեջ առաջին անգամ ալևիները հասարակայնորեն ընդունեցին իրենց ինքնությունը:

Իսլամականության աճին զուգընթաց՝ 1980-ական թվականների վերջին, Թուրքիայում սկսվեց ազատականացման շրջանը, և սկսվեցին հասարակական քննարկումներ այնպիսի թեմաների շուրջ, որոնք առաջ արգելված էին, այդ թվում ալևիներին որպես առանձին կրոնական համայնք դիտելը: Նրանք պայքարում էին իրենց՝ որպես առանձին կրոնական համայնք ճանաչման, ալևիական կրոնական արարողությունների օրինականացման, պետական կրթական համակարգում իրենց գաղափարախոսությունների ներկայացման և հեռարձակվող պետական լրատվամիջոցներում իրենց եթեր տրամադրելու համար: «Ալևիականության հարցը» դարձավ երկրում ամենաշատ քննարկվող թեմաներից:

Ալևիականության տեղի ունեցող ազատականացման գործընթացի վրա դրական ազդեցություն ունեցավ հատկապես Արևելյան Եվրոպայում 1980-ական թվականների վերջին տեղի ունեցած սոցիալիստական բլոկի փլուզումը, որի արդյունքում էթնիկ ազգայնականության գաղափարների աճով ոգևորված՝ ալևիներն ակտիվացրին քաղաքական պայքարը Թուրքիայում: Այս պայմաններում սոցիալիզմը, որը վերջին երկու տասնամյակների ընթացքում հանդիսանում էր երիտասարդ ալևի սերնդի գաղափարական այլընտրանքը, կորցրեց նախկին կարևորությունը: Ալևի բնակչության մի ստվար զանգված սկսեց փնտրել գաղափարական ինքնության այլ ճանապարհներ: Ահա այդ շրջանում նրանց մեծ մասը սկսեց անվանել ինքն իրեն «ալևի»: Հաջորդ և, թերևս, ամենակարևոր հանգամանքը, որի մասին վերը խոսվեց, Թուրքիայում իսլամական արմատականության խորացումն էր, ինչն ալևիներին դրդեց պայքարել իսլամականության դեմ:

Իր հերթին, թուրքական պետությունը եզակի զիջումներ կատարեց ալևիներին, որոնցից էր, օրինակ, Շահքուլու սուլթանի միաբանության շենքի՝ ալևիներին օգտագործման հանձնելու հարցը: Չնայած այն հանգամանքին, որ միաբանությունը մոտ հինգ դար շարունակ ունեցել էր բավական ընդարձակ տարածքներ, 1985թ. ալևիներն իրավունք ստացան ժամանակավորապես օգտվել միաբանության շենքի մի փոքր հատվածից, ինչն ալևիների հետագա պայքարի համար կարևոր առաջընթաց էր [7]:

Հաջորդ զիջումը, որ կառավարությունը կատարեց ալևիներին, նրանց գլխավոր տոնակատարություններից մեկի՝ Հաջի Բեքթաշի անունը կրող փառատոնի կազմակերպումը պաշտոնապես թույլատրելն էր, որը տեղի էր ունենում նույնանուն բնակավայրում: Այս տոնը ոչ թե իսլամական տոների նման շարժական էր, այլ ուներ հստակ օր և ամեն տարի ալևիների կողմից նշվում էր

կիսագաղտնի պայմաններում: Ալևիական այս մեծ սրբին նվիրված տոնախմբությունները, որոնք առաջ վերածվում էին ընդդիմադիր մշակութային փառատոնի, հանկարծ արժանացան պաշտոնական հովանավորության. մշակույթի նախարարությունը ստանձնեց Հաջիբեքթաշում տեղի ունեցող փառատոների կազմակերպման աշխատանքները՝ իբրև թե դրանք միջազգային փառատոն դարձնելու մտադրությամբ: Սակայն դժվար է ասել, թե իրականում քաղաքական այդ քայլը որքանով էր շահեկան ալևիների համար, քանզի, ըստ նրանց՝ պետության միջամտությունը զրկում էր իրենց որպես համայնք ներկայանալու հնարավորությունից՝ փաստելով, որ այն օրվանից սկսած, երբ Հաջիբեքթաշում տեղի ունեցող փառատոների կազմակերպումը պետությունը վերցրեց իր վրա, մասնակից մոտ հարյուր հազարի հասնող զբոսաշրջիկների թիվը մոտ տասն անգամ կրճատվեց: Բացի այդ՝ նրանց դժգոհությունների պատճառ էր հանդիսանում նաև այն, որ ալևիական ավանդույթները ներկայացնում էին մարդիկ, ովքեր դեմ էին ալևիներին[1] [8, s. 38; 9, p. 157-158]:

Այս հարցում պետության հովանավորությունը ծառայում էր միաժամանակ մի քանի նպատակի. հետաքրքրությունն ալևիականության մշակութային և հոգևոր չափումների նկատմամբ ընդունակ էր շեղելու ալևի երիտասարդությանը ձախ արմատականությունից, որի արդյունքում ալևիները կարող էին դառնալ պատնեշ սուննի իսլամական քաղաքականացած ֆունդամենտալիզմի առաջացման ճանապարհին: Մյուս կողմից՝ ալևիական ինքնության շեշտումն ու ընդգծումը կարող էին թուլացնել քրդական արմատական շարժումը, ուր ալևի քրդերը ներկայացված էին ոչ համաչափ կերպով:

Այդ նպատակով մի քանի տարվա ընթացքում ալևիների մասին լույս տեսավ ավելի շատ գրականություն, քան ամբողջ անցյալ կես դարում: Գրախանութներում ազատորեն վաճառվում էին ալևիական սովորույթները ներկայացնող գրքեր, որոնք, սակայն, ոչ բոլորն էին ալևիների կողմից ընդունելի, քանզի դրանց մի մասն առաջ էր քաշում պետությանը հարմար տեսակետներ:

1980-ական թվականները փորձությամբ լի էին հատկապես քուրդ ալևիների համար. չնայած այն իրողությանը, որ ալևիականությունը պատմականորեն միացնում էր ալևի թուրքերին և քրդերին մեկ համայնքի մեջ, այնուամենայնիվ, ալևի քրդերը կանգնած էին ազգային ինքնության խնդրի առջև: Այդ շրջանում դոմինանտ դարձավ թուրքականություն և ալևիականություն միավորող տարրը՝ քրդերի առջև ծառացնելով այն հարցը, թե արդյոք ալևիականությունը թուրքական է կամ ներազգային, արդյոք իրենք սկզբում ալևի էին, հետո՝ քուրդ: Նրանք փնտրում էին միավորող գործոններ, որպեսզի տարբեր

[1] Փառատոնի բացման ժամանակ արտասանած ճառում մշակույթի նախարարը նշեց, որ կառավարությունը պատրաստվում է «սեմահ» պարողների մշտական խումբ ստեղծել զբոսաշրջիկների համար և բնակավայրում կառուցել մեծ մզկիթ: Սակայն այս երկու մտահղացումներն էլ թշնամաբար ընդունվեցին ալևիների կողմից, քանի որ որակվեցին որպես սուննիների՝ աշխարհի առաջ ալևիականության իրական պատկերը խեղաթյուրված ներկայացնելուն ուղղված քայլ:

ազգային խմբերին ներառեն ալևիական համայնքում: Սակայն նշենք, որ պատմությունը ցույց տվեց, թե ալևիականությունը, որպես կրոնական ինքնություն, ավելի ուժեղ է ազգային ինքնությունից: Այս տեսակետի վառ ապացույցն այն է, որ Քրդական աշխատավորական կուսակցության (այսուհետև՝ ՔԱԿ) շարքերում փոքր թիվ էին կազմում այն ալևիները, որոնք չմասնակցեցին պետության դեմ քրդերի մղած պայքարին [9, p. 18]:

Ընդհանուր առմամբ երկրի արևելյան շրջաններում տեղի ունեցող ՔԱԿ ահաբեկչական գործողությունների դեմ պայքարը հաճախ վնասում էր ալևիական բնակավայրերը և ստիպում բնակիչներին տեղաշարժվել դեպի երկրի արևմուտք[1]: Օրինակ՝ Դերսիմը բնակիչներից ազատելու նպատակով պետությունն անտառածածկ մի մեծ հատված դարձրեց արգելավայր և 1987թ. այդ տարածքում գտնվող 233 բնակավայրերի բնակիչներին հրամայեց լքել տարածքը՝ Թուրքիայի հարավային և արևմտյան մասերում համապատասխան հողակտորներ խոստանալով նրանց, ովքեր առանց ընդդիմանալու կընդունեն առաջարկը: Սակայն որևէ վիճակագրական տվյալ չկա այն մասին, թե քանի բնակիչ ընդունեց պետության առաջարկը: Իսկ 1994թ. աշնանը հսկայական մակերես ծածկող անտառներ այրվեցին Դերսիմի շրջանում: Թեև պետությունը պնդում էր, թե այդ գործողությունը քրդերի ձեռքի գործն է, այնուամենայնիվ, մամուլում շրջանառվող հիմնական վարկածն այն էր, որ անտառները հրկիզվել են թուրք զինվորների կողմից, որպեսզի ՔԱԿ զինվորները զրկվեն թաքստոց ունենալու հնարավորությունից [10]:

Այնուամենայնիվ, կառավարության ջանքերը չէին մեղմացնում երկրում բնակվող ալևիների և սուննիների փոխհարաբերությունները, որոնք շարունակում էին լարված մնալ արդեն մի քանի տասնամյակ, և, արդյունքում, 1990-ական թվականների առաջին կեսին տեղի ունեցան իրադարձություններ, որոնք ցնցեցին ալևիներին և խթան հանդիսացան ալևիական զարթոնքի և սեփական իրավունքների համար պայքարի վերածնման՝ բարձրացնելով ալևիների խնդիրները ողջ երկրում:

1993թ. հուլիսին Փիր Սուլթան Աբդալին նվիրված տոնակատարության շրջանակներում նույնանուն հասարակական կազմակերպությունը Սվազ քաղաքի «Մադրմաք» անունը կրող հյուրանոցում կազմակերպել էր մշակութային փառատոն, որին մասնակցելու հրավերք ստացած բազմաթիվ հայտնի մտավորականների թվում էր նաև անվանի թուրք գրող Ազիզ Նեսինը, որը բարկացրել էր սուննի մուսուլմաններին բանաստեղծ Սալման Ռուշդիի «Սատանայական բանաստեղծությունների» թարգմանությունները տպագրելու իր մտադրությամբ[2]:

Փառատոնին բռնությամբ միջամտելով՝ ցուցարարների մի մեծ խումբ բացահայտորեն հայտարարեց Ազիզ Նեսինին սպանելու մտադրության մա-

[1] Human Rights Watch, Turkey, Human rights developments, http://www.hrw.org/legacy/wr2k/Eca-20.htm
[2] New York Times, 3 July 1993.

սին, ինչից հետո հարձակվեց և տապալեց փառատոնի առիթով կանգնեցված Փիր Սուլթան Աբդալի արձանը՝ հրկիզելով հյուրանոցը: Հրդեհը և թանձր ծուխը պատճառ հանդիսացան 37 մարդու մահվան, վիրավորվեցին 51-ը, որոնց թվում էր նաև Նեսինը, որին ոստիկանությունը հազիվ փրկեց լինչի դատաստանի ենթարկել ցանկացող ամբոխի ձեռքից [6, s. 168]:

1993թ. Սվազի իրադարձությունները տարբերվում էին 1978թ. տեղի ունեցած դեպքերից, քանի որ այս անգամ որպես թիրախ էր հանդիսանում միայն ալևի մտավորականությունը[1] [11]:

Հաջորդ նշանակալի իրադարձությունը, ինչը նույնպես խոր հետք է թողել ալևիների շրջանում, 1995թ. Ստամբուլի՝ մեծ մասամբ ծագումով Թունջելիի (Դերսիմի) շրջանից, ազգությամբ քուրդ ալևիներով բնակեցված Գազիոսմանփաշա կամ Գազի թաղամասում տեղի ունեցած արյունալի դեպքերի շարքն է, երբ անհայտ զինված անձինք, կրակ բացելով մի քանի թեյարանի վրա, որոնց հաճախորդների մեծ մասը սովորաբար ալևիներ էին լինում, սպանեցին մեկ և վիրավորեցին բազմաթիվ մարդկանց, ինչից հետո Գազի թաղամասի ալևի բնակիչները դուրս եկան փողոց՝ բողոքելով ոստիկանության դանդաղ գործողությունների դեմ [12, p. 24]: Արդյունքում՝ արձանագրվեցին բախումներ ցուցարարների և ոստիկանների միջև, ինչի պատճառով սպանվեց մոտ երկու տասնյակ մարդ: Իրադարձությունների ամբողջ ընթացքում ալևի համայնքի ղեկավարները մեծ ջանքեր էին գործադրում ժողովրդին հանդարտեցնելու համար, մինչդեռ ոստիկանները բացահայտ համակրանք էին ցույց տալիս սուննի արմատականների նկատմամբ [13, s. 313]:

Այդ օրերին, կապված Ստամբուլում տեղի ունեցող իրադարձությունների հետ, նմանատիպ բողոքի ցույցեր ևս տեղի ունեցան Իզմիրում, Մերսինում և Իզմիթում [13], իսկ թուրքական իշխանությունները Գազիի դեպքերի կապակցությամբ դատական գործեր հարուցեցին մոտ 100 անձանց դեմ՝ անօրինական ցույցեր կազմակերպելու մեղադրանքով [12, p. 26]:

Ընդհանուր առմամբ քեմալիստական սեկուլյարիզմի թուլացումը 1990-ական թվականներին երկու պարադոքսալ գործընթաց առաջացրեց ալևիների համար: Նրանց նկատմամբ խորացան ճնշումները սուննի արմատական քաղաքական ուժերի կողմից, բացի այդ, ինչպես արդեն նշեցինք, որոշակի ազատականացումը Թուրքիայում թույլ տվեց ալևիներին ձևավորել կրոնական խմբեր, կատարել ալևիական ծեսեր երկրի խոշոր քաղաքներում, հասարակական վայրերում: Եվ չնայած կրոնական հարցերի նախարարությունը շարունակում էր ալևիական գյուղերում մզկիթներ կառուցելու քաղաքականությունը, սկսեցին կառուցվել նաև ջեմևիներ, հնարավորություն տրվեց ստեղծել

[1] Սվազի դեպքերի հետ կապված ամենասարսափելի փաստը, թերևս, ոստիկանության պահվածքն էր, որը, չնայած այն փաստին, որ մի քանի անգամ զգուշացրեց ցուցարարներին ցրվել, սակայն անգամ լուրջ փորձ չկատարեց՝ նրանց հյուրանոցի հարակից տարածքից հեռացնելու համար:

հասարակական կազմակերպություններ և միություններ, որոնք տարածվեցին Թուրքիայի տարածքով մեկ: Ալևի մտավորականները և համայնքի ղեկավարներն սկսեցին զբաղվել ալևիների ինքնության պարզաբանմանը և ծագմանը վերաբերող խնդիրներով, ավանդույթները, պատմությունը լուսաբանելով: Ամբողջ երկրի տարածքով մեկ բացվեցին ալևիական միություններ, փորձեր արվեցին ստեղծել հասարակական գործունեություն ծավալող կազմակերպություններ, որոնք, սակայն, առկա ճնշումների պատճառով մինչև վերջերս գրեթե չէին կարողանում ակտիվ գործունեություն ծավալել: Դրանց անդամները կամավոր հավաքված ալևիներն էին երկրի տարբեր շրջաններից: Հարկ է նշել միայն, որ կառուցված ջեմևիները պետության կողմից դիտարկվում էին որպես զուտ մշակութային օջախներ, իսկ միություններն ու կազմակերպությունները՝ ոչ թե ալևիական, այլ հասարակական:

Վերջին տարիներին ալևիները, ունենալով հստակ ձևավորված պահանջներ, ավելի ակտիվացրին պայքարը թուրքական պետության կողմից իրենց իրավունքների ճանաչման համար:

Ալևիների առաջին և ամենակարևոր պահանջը պետությունից իրավահավասարությունն է՝ որպես Թուրքիայի Հանրապետության լիիրավ քաղաքացիներ: Նրանք պահանջում են ընդունել և հարգել իրենց կրոնական պատկանելությունը, ճանաչել ալևիականությունը որպես իսլամից առանձին կրոն և ոչ թե իսլամի տարբերակ, ինչպես հաճախ մեկնաբանում են պետական գործիչները: Այս պահանջն իրականություն դարձնելու համար ալևիները ջանք չեն խնայել հանրապետական Թուրքիայի գոյության ողջ պատմության ընթացքում: Այս խնդրի լուծմանն են ուղղված աշխարհի տարբեր երկրներում բնակվող գրեթե բոլոր ալևիների գործողությունները:

Ալևիները պետությունից պահանջում են նաև վերացնել դպրոցներում կրոնի պարտադիր դասերի անցկացումը, որոնց ժամանակ ուսուցանվում և քարոզվում է միայն սուննիզմ, իսկ իսլամի ուսուցիչները դասերի ընթացքում ստիպում են դպրոցականներին նամազ անել: Հայտնի են դեպքեր, երբ նամազ չանելու համար դպրոցականները ենթարկվել են ծեծի: Օրինակ՝ 2007թ. Ռամազանի ընթացքում Ստամբուլի դպրոցներից մեկում ուսուցիչը ծեծի էր ենթարկել մի ալևի աշակերտի՝ ծոմի ընթացքում նրան ուտելիս տեսնելով: Այս կապակցությամբ մեծ աղմուկ բարձրացավ, բազմաթիվ հրապարակումներ եղան թուրքական և արտասահմանյան մամուլում: Բազմաթիվ ալևիական կազմակերպություններ իրենց բողոքի ձայնը բարձրացրին, մի շարք պատգամավորներ հայտարարեցին երևույթի անընդունելի լինելու մասին[1]:

Այս խնդրի լուծումը ալևիները տեսնում են կրոնի դասերն ընտրովի դարձնելու մեջ, ինչպես նաև պնդում են, որ դպրոցներում դասավանդվի ալևիականություն:

[1] BİA Haber Merkezi, 10 Aralık 2007.

Հաջորդ պահանջը, որ ներկայացնում են ալևիները, կապված է կրոնի հարցերով նախագահության գործունեության հետ: Նրանք ցանկանում են, որպեսզի վերացվի նախագահությունը, քանի որ նրա գործունեությունը հիմնականում նպատակաուղղված է Թուրքիայում սուննիզմի տարածմանը և ամրապնդմանը բնակչության շրջանում: Սակայն, կարծում ենք, որ ավելի նպատակահարմար և իրագործելի կլիներ նախագահությունից պահանջել՝ իր հովանավորության տակ առնել նաև ալևիներին, քան նրա գործունեության դադարեցումն ընդհանրապես: Երբեմն մի շարք ալևիներ ցանկություն են հայտնում մասնակցել նախագահության աշխատանքներին, ինչը, սակայն, մերժվում է սուննիների կողմից:

Իսլամական հոգևոր արարողությունները և կրթությունը թուրքական կառավարությունն իրականացնում է կրոնական հարցերի նախագահության միջոցով, որը կարգավորում է երկրում գրանցված 77 հազարի հասնող[1] (այլ տվյալներով՝ 85 հազար[2]) մզկիթների աշխատանքը և նրանց իմամների՝ աշխատանքով ապահովման հարցը: Նրա հովանավորությունից դուրս են մնում ալևիները, որոնք թեև համեմատաբար ազատ դավանում են իրենց կրոնը և կառուցում ջեմևիներ, սակայն դրանք չունեն որևէ իրավական կարգավիճակ՝ որպես պաշտամունքի վայրեր, և պետության կողմից դիտվում են որպես մշակութային տներ: Սա ևս ալևիների պահանջներից մեկն է՝ տալ ջեմևիներին իրավական կարգավիճակ, որտեղ կկարողանան կատարել ծեսեր, և վերցնել դրանք պետական խնամակալության տակ, քանի որ ալևիները ևս, Թուրքիայի մյուս բոլոր քաղաքացիների նման, պետությանը վճարում են հարկեր, որոնք, սակայն, նպաստում են մզկիթներ կառուցելուն և սուննիզմի տարածմանը: Պետությունն ալևիական գյուղերում շարունակում է կառուցել մզկիթներ, որոնք, սակայն, հիմնականում չեն ծառայում իրենց նպատակին, թեև ունեն նշանակված իմամներ և պահպանվում են պետության կողմից: Նախագահության հիմնական նպատակն իսլամի միանման մեկնաբանումն է, որի արդյունքում իրենց մուսուլման համարող ալևիները կհաճախեն մզկիթներ: Այդ պատճառով սեպտեմբերի 12-ից հետո ստեղծված ռազմական ռեժիմի՝ ալևիական գյուղերում մզկիթներ կառուցելու քաղաքականությունը լայն աջակցություն է գտնում սուննի իսլամիստների կողմից:

Ալևիները ցանկանում են իրենց մասնակցությունն ունենալ Թուրքիայի քաղաքական կյանքում՝ պաշտոնապես ճանաչված ալևիական միությունների և կուսակցությունների միջոցով: Այդ պատճառով նրանք պահանջում են պետությունից ճանաչել ալևիական միությունները և կազմակերպությունները, քանզի աջակցելով այլ կուսակցություններին՝ ամեն անգամ իրենց խաբված

[1] Turkey - International Religious Freedom Report 2006, Bureau of Democracy, Human Rights, and Labor, http://www.state.gov/g/drl/rls/irf/2006/71413.htm
[2] http://www.bbc.co.uk/, 19 March 2008

են համարում, ինչպես, օրինակ, վերջին ընտրությունների ժամանակ, երբ ալևիներն ակտիվորեն աջակցեցին ԱԶԿ-ին, սակայն, հաղթանակած կուսակցությունը ոչ մի կարևոր պաշտոն նրանց չհանձնեց: Անգամ վարչական պաշտոններում, ինչպես Ստամբուլի նահանգային կառավարական կազմն է, խուսափում են ալևիներ նշանակել[1]:

Պահանջներից մեկն էլ պետության կողմից Սվազում գտնվող «Մադըմաք» հյուրանոցը որպես թանգարան ճանաչելու հարցն է, քանի որ, ինչպես արդեն նշեցինք, 1993թ. հուլիսին Սվազում տեղի ունեցած ողբերգությունը խոր հետք է թողել ալևիների շրջանում:

Վերոնշյալ պահանջներն իրականացնելու նպատակով ալևիները ջանք չեն խնայում՝ դիմելով ցանկացած քայլի, որն օրենքի սահմաններում կարող է հասցնել իրենց նպատակին:

Վերջին տասնամյակների ընթացքում թուրքական իշխանությունների վարած քաղաքականությունն ալևիների նկատմամբ և հատկապես վերոնշյալ բախումներն էլ ավելի արմատականացրին ալևիների պայքարն իրենց իրավունքների համար, և երկարատև լարված լռությունից հետո 2008թ. նոյեմբերի 10-ին Անկարայում, Թուրքիայի պատմության նորագույն շրջանում առաջին անգամ, ալևիները կազմակերպեցին հանրահավաք, որին մասնակցում էր երկրում բնակվող ալևիական համայնքի մոտ հիսուն հազար ներկայացուցիչ, որոնք հանրահավաքի միջոցով իրենց պահանջներն իշխանություններին ներկայացնելու նպատակով մայրաքաղաք էին ժամանել երկրի տարբեր շրջաններից: Հանրահավաքը պաշտոնապես կազմակերպված էր «Ալևի-բեքթաշիների ֆեդերացիայի» կողմից[2]:

Հանրահավաքի մասնակիցները ներկայացրին իրենց խնդիրները՝ հիմնականում շեշտադրելով երկրում ալևիական համայնքի գոյության և նրա ներկայացուցիչների իրավունքները ճանաչելու պահանջները: Հատկանշական է, որ մասնակիցներն անընդհատ բղավում էին «Թուրքիան աշխարհիկ է, աշխարհիկ էլ կմնա» խոսքերը[3]:

Անհրաժեշտ է նշել, որ այս հանրահավաքը ոչ բոլոր ալևիների կողմից ընդունվեց խանդավառությամբ: Օրինակ՝ ալևիական հասարակական կազմակերպություններից մեկի՝ «Ջեմ Վաքֆ»-ի ղեկավար Իզեթթին Դողանն այս առիթով հայտարարեց. «Մենք չենք աջակցում այն ալևիներին, որոնք կազմակերպել են հանրահավաքը, քանի որ նրանք փորձում են ալևիականությունը ներկայացնել որպես իսլամից առանձին դավանանք: Նրանք չեն ընդունում Ալլահին, Մարգարեին և Ղուրանը որպես իրենց Աստված, Մարգարե և Գիրք»[4]:

[1] Radikal, 17 Kasım 2008.
[2] Aksiyon. 17 Kasım 2008.
[3] Radikal, 11 Kasım 2008.
[4] Zaman, 11 Kasım 2008.

Ալևիների անցկացրած հանրահավաքը թուրքական իշխանական օղակներում ևս արժանացավ տարաբնույթ վերաբերմունքի: Պետնախարար Սաիդ Յազըջըօղլուն մասնավորապես նշեց. «Ալևիների պահանջը, այն է՝ դադարեցնել կրոնի հարցերով նախագահության գործունեությունը, ծայրահեղություն է»[1]: Իսկ կրթության նախարարը ողջունեց ալևիների քննադատությունը դպրոցական դասագրքերում ալևիականության մասին տեղեկություններ զետեղելու վերաբերյալ[2]:

Վարչապետի նախկին խորհրդական, Թուրքիայում իշխող Արդարություն և զարգացում կուսակցության (ԱԶԿ) ներկայացուցիչ Ռեհա Չամուրօղլուն ասաց, թե հանրահավաքը կազմակերպված էր ոչ թե ալևիների պահանջները ներկայացնելու, այլ ԱԶԿ-ական կառավարության հեղինակությանը հարվածելու նպատակով[3]: Իսկ ավելի ուշ ավելացրեց, թե առաջին գործը, հավանաբար, կլինի ալևիական աղոթատեղիներն օրինականացնելը, սակայն այդ հանգամանքի հետ կապված՝ կան որոշ հակասություններ սահմանադրության հետ, և ամեն դեպքում դրանք դժվար կլինի լուծել[4]:

Անկախ այն հանգամանքից, թե ինչպես ընդունվեց ալևիների բազմահազարանոց հանրահավաքը ԱԶԿ-ական կառավարության կողմից, մի բան հստակ է. ալևիները վերջապես դուրս եկան «ստվերից» և բացահայտ ներկայացրին իրենց պահանջները:

2009թ. ալևիների պահանջները քննարկելու և դրանց լուծում տալու նպատակով ԱԶԿ անդամների ջանքերով կառավարությունը որոշեց պատրաստել վերոնշյալ բոլոր խնդիրների լուծումը պարունակող փաստաթուղթ՝ ալևիական միությունների առաջնորդներին հրավիրելով մասնակցել այդ առիթով կազմակերպվելիք հանդիպումներին:

Այդ նպատակով 2009թ. հունիս և 2010թ. հունվար ամիսների միջև ընկած ժամանակահատվածում կազմակերպվեցին յոթ տարբեր քննարկում-սեմինարներ, որոնց ընթացքում քննարկվեցին ալևիների պահանջները:

Շարունակվող քննարկումների ֆոնին 2009թ. նոյեմբերի 8-ին Ստամբուլում ալևիական միությունները կազմակերպեցին հանրահավաք՝ «Հանուն հավասար քաղաքացիության իրավունքի» նշանաբանով, որին մասնակցում էր ավելի քան 200 հազար ալևի: Հանրահավաքի ընթացքում ալևիական երեք մեծ կազմակերպությունների՝ Հաջի Բեքթաշ Վելի միության, Փիր սուլթան Աբդալ մշակութային միության և Ալևի-բեքթաշիների ֆեդերացիայի նախագահները ելույթ ունեցան՝ քննադատելով կառավարության մտահղացումն ալևիական սիմպոզիումների վերաբերյալ: Նրանք առաջ քաշեցին նույն պահանջները, ինչ նախորդ տարի տեղի ունեցած հանրահավաքի ընթացքում՝

[1] CNNTurk, 9 Kasım 2008.
[2] CNNTurk, 11 Kasım 2008.
[3] Yeni Şafak, 12 Kasım 2008.
[4] CNNTurk, 14 Kasım 2008.

պնդելով, որ ԱԶԿ առաջնորդները փորձում են ալևիականությունը հարմարեցնել իրենց սեփական գաղափարներին[1]:

Սակայն նմանատիպ բողոքի ակցիաները չխոչընդոտեցին կառավարության ձեռնարկած քննարկումների անցկացմանը, և 2010թ. հունվարին ավարտվեցին ալևիական խնդիրների լուծմանն ուղղված սիմպոզիումները, որոնց մասնակցում էին ընդհանուր առմամբ մոտ 400 անձինք, այդ թվում՝ կառավարության անդամներ, գիտնականներ, քաղաքական գործիչներ, ալևիական կազմակերպությունների ղեկավարներ և այլն[2]:

Վերջին սիմպոզիումի ժամանակ, որպես բոլոր հանդիպումների ընթացքում տեղի ունեցող քննարկումների ամփոփում ներկայացված որոշումները, սակայն, մեղմ ասած չէին բավարարում ալևիների ներկայացրած պահանջները: Այնուամենայնիվ, այն փաստը, որ կառավարությունը, թեև առայժմ գրեթե անարդյունք, բայց փորձում է լուծում տալ ալևիների խնդիրներին, արդեն նշանակալի առաջընթաց է, քանի որ դրանք առաջին անգամ են պետական մակարդակով քննարկվում հանրապետական Թուրքիայի պատմության մեջ: Ալևիական զարթոնքը, վերջին տարիների ընթացքում կազմակերպված բազմահազարանոց ցույցերը և Եվրոպական միության անդամ դառնալու թուրքական պետության գործադրած ջանքերը ստիպում են կառավարությանը հաշվի նստել օր օրի ավելի ակտիվացող և աննախադեպ զարթոնք ապրող ալևիականության հետևորդների պահանջներին ու չվերադառնալ նրանց նկատմամբ ոչ շատ վաղ անցյալում իրականացվող ագրեսիվ քաղաքականությանը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ միանշանակ կարող ենք փաստել, որ վերջին շրջանում ալևիների պայքարի ցանկացած եղանակ նշանակում է այն, որ նրանք այլևս վերջնականապես ոտքի են կանգնել իրենց իրավունքների պաշտպանության համար և շարունակելու են հետագա պայքարը, մինչև թուրքական պետությունը չկատարի իրենց պահանջները, ինչը նշանակում է, որ շատ մոտ ապագայում հնարավոր է տեղի ունենան զարգացումներ Թուրքիայում ալևիական հարցի շուրջ, քանի որ ալևիական համայնքի առջև ծառացած խնդիրները բազմաթիվ են և դրանց վաղ թե ուշ պետք է թուրքական իշխանությունների կողմից որևէ կերպ լուծում տրվի, այլապես հնարավոր չէ անընդհատ անտեսել բնակչության գրեթե 20%-ը կազմող քաղաքացիների պահանջները՝ պնդելով, թե նրանք բոլորը սուննիներ են և հեռու պահել նրանց երկրի քաղաքական, հասարակական կյանքից:

Մարտ, 2011թ.

[1] BİA Haber Merkezi, 9 Kasım 2009.
[2] Radikal, 08 Şubat 2010.

Աղբյուրներ և գրականություն

1. *Гасратян М.,* Курды Турции в новейшее время, Ереван, 1990.
2. *Բրոյնեսեն Մ.,* Իրան-նամէ, 1993թ. հուլիս:
3. *Norton J. D.,* The Turks and Islam, - The World's Religions, London, Routledge, 1988.
4. *Դումանյան Ս.,* Ազգայնական շարժում կուսակցության («Գորշ գայլեր») գործունեության հիմնական փուլերը Թուրքիայում 1960-70-ական թթ., Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, Երևան, 2006:
5. *Çalışlar O.,* Alevilerin tarihinden kritik sayfalar, Aleviler vali de olmak istiyoruz general de, İstanbul, 2009.
6. *Zeidan D.,* The Alevi of Anatolia, MIddle East Review of International Affairs, Volume 3, No. 4, December, 1999, http://meria.idc.ac.il/journal/1999/issue4/jv3n4a5.html
7. *Erdemir A.,* Death of a Community: Kızılbaş-Alevi Predicament in 1990s Istanbul, www.alevibektasi.org/aykan_sempoz.htm
8. *Balkız A.,* Aleviler general de olmak istiyor, vali de…, Aleviler vali de olmak istiyoruz general de, İstanbul, 2009.
9. *Shankland D.,* The Alevis in Turkey, New York 2003.
10. *Bruinessen M.,* Forced evacuations and destruction of villages in Dersim (Tunceli), and Western Bingöl, Turkish Kurdistan, Spetember-November 1994, http://www.let.uu.nl/~martin.vanbruinessen/personal/publications/Forced_evacuations.pdf
11. *Bruinessen M.,* Kurds, Turks and the Alevi revival in Turkey, http://www.let.uu.nl/~martin.vanbruinessen/personal/publications/Alevi_revival.htm
12. *Aliza M.,* "Should I shoot you?": An eyewitness account of an Alevi uprising in Gazi, Middle East Report, No. 199, April-June 1996.
13. *Poulton H.,* Silindir şapka, bozkurt ve hilal, Istanbul, 1999.

БОРЬБА АЛЕВИТОВ В ТУРЦИИ НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ

Вардан Арутюнян

Резюме

Отношения между алевитами и суннитами в Турции всегда были напряженными и часто сопровождались кровопролитными столкновениями – в том числе и такими масштабными, как столкновения в конце 1970-ых в Малатии и Свазе, а также события в первой половине 1990-ых в Свазе и Стамбуле. Параллельно с этими событиями в Турции происходил также процесс либерализации алевизма. Поощрение этого процесса со стороны государства воспринималось алевитами отрицательно, хотя имело также положительные стороны, так как произошло своеобразное пробуждение алевизма, и в стране стали свободно обсуждать проблемы алевитов.

В последнее десятилетие алевиты сформировали ряд требований к турецкому государству, которое в 2009-2010 годах предприняло некоторые шаги по исполнению этих требований.